

«_____» _____ 2015թ.

N_____

ք. Ստեփանակերտ

**«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթին և այն ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերությունը «լրանալուց հետո» բառերից հետո լրացնել «, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Հարկային պարտավորությունների նկատմամբ կիրառվող երեք տարի վաղեմության ժամկետը խոչընդոտ է հանդիսանալու գույքահարկի և հողի հարկի ապառքների, տույժերի, տուգանքների հավաքագրման գործընթացի իրականացման համար: Առաջարկվող օրինագիծը հնարավորություն կընձեռնի գանձել գույքահարկի և հողի հարկի կուտակված ապառքներն ու հաշվարկված տույժերը, որը կնպաստի ավելի իրատեսական բյուջեների կազմմանը, համայնքների բյուջետավարման գործընթացի հստակեցմանը և հարկային վարչարարության բարելավմանը:

Սույն նախագծի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի» մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում կատարվող համապատասխան լրացումներով:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Սույն օրենքի նախագծի ընդունմամբ առաջարկվում է համապատասխան լրացում կատարել «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում, որը հնարավորություն կընձեռնի գանձել գույքահարկի և հողի հարկի կուտակված ապառքներն ու հաշվարկված տույժերը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Օրենքի նախագիծը մշակվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի Ստեփանակերտի քաղաքային տեսչության եկամուտների և իրավաբանական բաժինների կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Օրինագծի ընդունմամբ կիրականցվի գույքահարկի և հողի հարկի կուտակված ապառքների ու հաշվարկված տույժերի գանձում, որը կնպաստի համայնքների ավելի իրատեսական բյուջեների կազմմանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-72 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1)2-րդ կետում «հարկվող օբյեկտը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ փոխադրամիջոցների)» բառերը, «առաջանում է» բառերից հետո՝ «(նախկին սեփականատիրոջ համար դադարում է)» բառերը.

2)5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5)Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու դեպքում գույքահարկի պարտավորությունը դադարում է: Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ սույն կետով սահմանված փոխադրամիջոցները լիազոր մարմնում վերահաշվառելու դեպքում, այդ փոխադրամիջոցների համար մինչև խոտանման ամսվան հաջորդող ամսվա 1-ը դադարած գույքահարկի պարտավորությունները հակադարձվում են և ենթակա են կատարման՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափերով:

Սույն կետով սահմանված արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6)Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի օտարման օրվան հաջորդող ժամանակաշրջանի համար վճարումների առկայության դեպքում հաշվառող մարմնի կողմից այդ գումարները հաշվանցվում են հարկ վճարողի գույքահարկի գծով այլ փոխադրամիջոցների պարտավորությունների հաշվին, իսկ դրանց բացակայության դեպքում ֆիզիկական անձի դիմումի հիման վրա վերադարձվում են ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Կազմակերպությունների գույքահարկի հաշվարկման կարգը

1.Կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա կիսամյակը:

2. Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին:»:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի.

1)1-ին մասում «եռամսյակ» բառը փոխարինել «կիսամսյակ» բառով, իսկ «եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը» բառերը՝ «կիսամսյակին հաջորդող ամսվա 20-ը» բառերով:

2)4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցները տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը, իսկ փոխադրամիջոցի օտարման դեպքում՝ մինչև փոխադրամիջոցի օտարման պայմանագրից ծագող սեփականության իրավունքը գրանցելը:

Հաշվառող մարմնի կողմից փոխադրամիջոցների գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու դեպքում փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության դադարեցման (հաշվառող մարմնի կողմից գույքահարկի պարտավորությունների վերահաշվարկման) համար հիմք են հանդիսանում փոխադրամիջոցների հաշվառում վարող լիազոր մարմնի կողմից սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկությունները կամ գույքահարկ վճարողին տրված՝ խոտանումը հիմնավորող փաստաթուղթը: Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցները լիազոր մարմնում վերահաշվառվում են գույքահարկ վճարողին հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով գույքահարկի պարտավորություններ չունենալու տեղեկանքի հիման վրա:»:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի վերջում վերջակետը փոխարինել ստորակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ կետերով.

«5)սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով: Հաշմանդամներին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված ավտոմեքենաների մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ.

6) փոստային կապի ազգային օպերատորը:»:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն օրենքով սահմանված գույքահարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Գույքահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս «Փոստային կապի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի «Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների համար լրացուցիչ արտոնություն սահմանելու մասին» N131 որոշմամբ փոստային կապի ազգային օպերատորին և սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամներին տրված է գույքահարկի արտոնություն, որը սահմանված չէ «Գույքահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում:

Շատ հաճախ փոխադրամիջոցները այլ համայնք (մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության որևէ համայնք) վաճառելու դեպքում օտարմանը հաջորդող ամսվա 1-ից մինչ տարվա վերջ ընկած ժամանակահատվածի համար գույքահարկի գումարը ստիպված է լինում վճարել և՛ նախկին, և՛ նոր սեփականտերը:

Գույքահարկի բազաներում ընդգրկված են փոխադրամիջոցներ, որոնք ունեն գույքահարկի ապառքներ և տույժեր, սակայն տասը և ավելի տարիների ընթացքում նշված փոխադրամիջոցները չեն շահագործվել (մասնավորապես՝ հին նմուշի համարանիշներով փոխադրամիջոցներ), ժամանակին չեն խոտանվել և ընդհանրապես գոյություն չունեն:

Իրավաբանական անձինք գույքահարկի հաշվետվություններն ու վճարումներն իրականացնում են եռամսյակային կտրվածքով, ինչը աննպատակահարմար է, քանի որ գույքահարկը կապված չէ իրավաբանական անձի տնտեսական գործունեության հետ և առաջացնում է ավելորդ փաստաթղթաշրջանառություն:

Ներկայումս դատական պրակտիկայում առկա են նախադեպեր, որոնց նկատմամբ դատարանը կիրառում է երեք տարի վաղեմության ժամկետը, հետևաբար երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող ապառքների, տույժերի, տուգանքների գանձումը անհնարին է դառնում:

Առաջարկվող օրինագիծը հնարավորություն կընձեռնի գանձել գույքահարկի և հողի հարկի կուտակված ապառքներն ու հաշվարկված տույժերը, որը կնպաստի ավելի իրատեսական բյուջեների կազմմանը, համայնքների բյուջետավարման գործընթացի հստակեցմանը, հարկային վարչարարության և գործարար միջավայրի բարելավման:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Սույն օրենքի նախագծի ընդունմամբ առաջարկվում է փոխադրամիջոցը այլ համայնք օտարելու դեպքում հստակեցնել հարկային պարտավորության առաջացման և դադարման պահը: Երեք տարվա վաղեմության ժամկետը տասով փոխարինելու միջոցով ակնկալվում է հարկ վճարողների մոտ գույքահարկի գծով առաջացած պարտավորությունները ժամանակին կատարելու պատասխանատվություն առաջացնել, որը հնարավորություն կընձեռնի գանձել գույքահարկի կուտակված ապառքներն ու հաշվարկված տույժերը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Օրենքի նախագիծը մշակվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի Ստեփանակերտի քաղաքային տեսչության եկամուտների և իրավաբանական բաժինների կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Օրինագծի ընդունը կնպաստի համայնքների ավելի իրատեսական բյուջեների կազմմանը, գույքահարկի բազաների ճշգրտմանը, համայնքների բյուջետավարման գործընթացի հստակեցմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը:

Ստեփանակերտի քաղաքապետ

Ս.Գրիգորյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-28 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6¹-րդ հոդվածի երրորդ պարբերությունը «առաջանում են» բառերից հետո լրացնել «(նախկին սեփականատիրոջ համար դադարում են)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «է» կետով և նոր պարբերություններով.

«է) փոստային կապի ազգային օպերատորը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել հողի հարկի գծով արտոնություններ:

Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար հողի հարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:

Համայնքի ավագանու կողմից հողի հարկի գծով սահմանած արտոնությունների գումարի դիմաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

Օրենքով կարող են սահմանվել հողի հարկի գծով այլ արտոնություններ:»:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը «հաշվարկները» բառից հետո լրացնել ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով» բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի.

1)1-ին մասում «եռամսյակային» բառը փոխարինել «կիսամսյակային» բառով, «եռամսյակ» բառը՝ «կիսամսյակ» բառով, իսկ «եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը» բառերը՝ «կիսամսյակին հաջորդող ամսվա 20-ը» բառերով:

2)2-րդ պարբերության 2-րդ նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Սույն օրենքով սահմանված հողի հարկի վճարման գծով խախտումներ հայտնաբերվելու դեպքում հողի հարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս «Փոստային կապի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով փոստային կապի ազգային օպերատորի համար սահմանված է հողի հարկի արտոնություն, որը սահմանված չէ «Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում առկա են սոցիալապես անապահով, բազմազավակ, գոհված և անհայտ կորած ազատամարտիկների, ընտանիքներ, միայնակ թոշակառուներ, հաշմանդամներ և այլ անվճարունակ անձինք, որոնք, ելնելով սոցիալական ծանր վիճակից, հնարավորություն չեն ունենում վճարել հողի հարկի գծով հարկային պարտավորությունները:

Օրենքի նախագծի ընդունմամբ համայնքի ավագանին հնարավորություն կստանա համայնքի սոցիալապես անապահով և անվճարունակ հարկ վճարողների նկատմամբ կիրառել հողի հարկի արտոնություն:

Հողի հարկի տարեկան գումարները հիմնականում փոքր գումար են կազմում, իսկ հարկի վճարումներն իրականացնում են եռամսյակային կտրվածքով, ինչը աննպատակահարմար է:

Ներկայումս դատական պրակտիկայում առկա են նախադեպեր, որոնց նկատմամբ դատարանը կիրառում է երեք տարի վաղեմության ժամկետը, հետևաբար երեք տարուց ավելի վաղեմություն ունեցող ապառքների, տույժերի, տուգանքների գանձումը անհնարին է դառնում:

Առաջարկվող օրինագիծը հնարավորություն կընձեռնի գանձել հողի հարկի կուտակված ապառքներն ու հաշվարկված տույժերը, որը կնպաստի ավելի իրատեսական բյուջեների կազմմանը, համայնքների բյուջետավարման գործընթացի հստակեցմանը, հարկային վարչարարության և գործարար միջավայրի բարելավմանը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Սույն օրենքի նախագծի ընդունմամբ առաջարկվում է երեք տարվա վաղեմության ժամկետը տասով փոխարինելու միջոցով վճարողների մոտ հողի հարկի գծով առաջացած պարտավորությունները ժամանակին կատարելու պատասխանատվություն առաջացնել, որը հնարավորություն կընձեռնի գանձել հողի հարկի կուտակված ապառքներն ու հաշվարկված տույժերը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Օրենքի նախագիծը մշակվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի Ստեփանակերտի քաղաքային տեսչության եկամուտների և իրավաբանական բաժինների կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Օրինագծի ընդունը կնպաստի համայնքների ավելի իրատեսական բյուջեների կազմմանը, հողի հարկի բազաների ճշգրտմանը, համայնքների բյուջետավարման գործընթացի հստակեցմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը:

Ստեփանակերտի քաղաքապետ

Ս.Գրիգորյան

